ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/82

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդարանը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.12.2017թ. թիվ 03/26-3/24422-17 գրությամբ «Տիսա» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ 90032661) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՍՀՆ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի 26.12.2017թ. թիվ Ե-848 գրության հիման վրա, 26.12.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Տիսա» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ ֆինանսների նախարարության լիազորված ներկայացուցիչ Արթուր Բաղդասարյանը:

2. **<u>ՀՀ ԱՍՀՆ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԱՍՀՆ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը 26.12.2017թ. թիվ Ե-848 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Տիսա» ՓԲԸ-ի միջև 15.02.2017թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-6-ԽՄ-2 ծածկագրով «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման հետ կապված պայմանագրի էական խախտումների հետևանքով «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը միակողմանի հրաժարվել և լուծել է կողմերիս միջև կնքված մատակարարման պայմանագիրը 31-րդ (միս խոզի) չափաբաժնի մասով»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Լիաննա Սարգսյանը և լիազորված ներկայացուցիչ Շուշան Անտոնյանը:

3. **<u>«Տիսա» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Տիսա» ՓԲԸ-ն 16.01.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ՏԻՍԱ» ՓԲԸ-ի միջև կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-6-ԽՄ-2 գնման պայմանագրի շրջանակներում 08.12.2017թ. Խարբերդի մասնագիտացված մանկատան կողմից էլեկտրոնային եղանակով ստացել ենք 200 կգ խոզի մսի մատակարարման հայտ: 12.12.2017թ. մսամթերքի տեղափոխման համար նախատեսված մեքենայով, անհրաժեշտ բժշկական փաստաթղթերով, պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան, պահանջվող 200 կգ խոզի միսը մատակարարել ենք Խարբերդի մանկատուն: Ընդունող հանձնաժողովը, սակայն չի ընդունել մատակարարված միսը՝ պատճառաբանելով, որ այն չի համապատասխանում տեխնիկական բնութագրին, ամբողջական չէ ու բաղկացած է տարբեր կտորներից, ինչի վերաբերյալ կազմվել է արձանագրություն, և սա այն դեպքում,

երբ խոզի մսի բոլոր կտորների վրա առկա է եղել միսը օգտագործման համար պիտանի լինելու մասին վկայող բժշկական կնիքը: Նույն օրը իրազեկել ենք Խարբերդի մանկատան ղեկավարությանը և հայտնել, որ կնքված պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրով որևէ բառ չկա մսի ամբողջական լինելու մասին: Նշենք նաև, որ եթե պատվերի հայտով գոնե նշվեր, որ այս անգամ միսը ուղարկենք ամբողջական մսեղիքի տեսքով (ջամդաք), միգուցե ընդառաջեինք և կատարեինք այդ ապօրինի պահանջը: Սակայն Խարբերդի մանկատունը իր այս քայլով մեզ դրել էր ծանր կացության մեջ և հետագայում միսը ստիպված վաճառել ենք ինքնարժեքից շոշափելի ցածր գնով՝ կրելով շուրջ 200 հազար ՀՀ դրամի վնաս:

Այնուհետև, 14.12.2017թ. Խարբերդի մանկատունը պատվիրում է ևս 200 կգ խոզի միս 19.12.2017թ-ին մատակարարելու համար, բանավոր զգուշացնելով, որ միսը պետք է լինի ամբողջական մսեղիքի տեսքով: Դիտավորյալ կերպով մեզ պատճառված վնասի չափը հաշվի առնելով և որպեսզի չխաթարվի շահառուների սնման պրոցեսը, նախապես 15.12.2017թ. էլեկտրոնային եղանակով իրազեկել ենք պատվիրատուին, որ միսը ամբողջական լինելու Ձեր պահանջը չի բխում կնքված պայմանագրի տեխնիկական բնութագրից, ուստի այն չենք մատակարարելու, և տեղեկացրել ենք, որ իրենց անօրինական պահանջը չփոխելու դեպքում, կարող ենք միակողմանի լուծել պայմանագիրը «խոզի միս» չափաբաժնի մասով: Մինչև մատակարարման օրը՝ 19.12.2017թ. պատվիրատուի կողմից ոչ մի արձագանք չենք ստացել մեր կողմից ներկայացված առարկությանը, իսկ 19.12.2017թ. առանց մեր ներկայացուցչի կազմվում է արձանագրություն և ուղարկվում մեզ, որի 3-րդ կետով որոշում է կայացվում միակողմանի խզել պայմանագիրը «խոզի միս» չափաբաժնի մասով: 25.12.2017թ. ստացել ենք գրություն, որ մանկատունը ցանկություն ունի միակողմանի խզելու պայմանագիրը «խոզի միս» չափաբաժնի մասով, որին էլ հաջորդել է նույն օրը մեզ ուղարկված որոշումը նշված չափաբաժնով պայմանագիրը լուծելու մասին՝ մանկատան տնօրենի կողմից հավաստված:

25.12.2017թ. մեզ ուղարկված գրությունը և հապճեպ կարգով պայմանագիրը մասամբ լուծելու մասին որոշումը հնարավորություն չի տվել մեզ անգամ առաջնորդվել պայմանագրի 9.10 կետով՝ խնդիրը լուծել բանակցությունների միջոցով: «Տիսա» ՓԲԸ-ին այլ անելիք չէր մնում, բացի պատվիրատուին 26.12.2017թ. գրություն ուղարկելուց, որով

հայտնել ենք մեր կողմից վիճահարույց չափաբաժնով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումը և նաև խնդրել ենք առաջնորդվել պայմանագրի 3.3.2 կետով և 10-նօրյա ժամկետում փոխհատուցել ընկերության կրած վնասը, ինչն առ այսօր չի կատարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ «Տիսա» ՓԲԸ-ն չի դրսևորել անգործություն, իր գործողություններով չի խախտել կնքված պայմանագրի որևիցե կետ, ընդհակառակը՝ դարձել է պատվիրատուի կամայականությունների զոհը՝ կրելով զգալի նյութական վնաս: Ուստի խնդրում եմ բողոքարկման խորհրդին անհիմն համարել Խարբերդի մասնագիտացված մանկատան կողմից պայմանագիրը նշված չափաբաժնի մասով խզելու որոշումը: Կայացրած որոշումը անհիմն է նաև այն հիմքով, որ մանկատան կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրության մեջ նշվել է, որ պայմանագիրը խզվում է մատակարարման հետ կապված էական խախտումների հետևանքով: Սակայն այդ նույն պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը վկայում է, որ պայմանագրի խախտումն էական է համարվում, եթե ապրանքների մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի: Այնինչ, 14.12.2017թ. մեզ ուղարկված պատվերի հայտից երևում է, որ մատակարարումը պետք է կատարվեր 19.12.2017թ., իսկ մանկատան կողմից 19.12.2017թ. կազմած արձանագրության 3-րդ կետով որոշում է ընդունվել միակողմանի լուծել պայմանագիրը 31-րդ չափաբաժնի մասով՝ չսպասելով պայմանագրով նախատեսված 3-օրյա ժամկետի ավարտին: Խնդրում եմ նաև չեղարկել «Տիսա» ՓԲԸ-ին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած գործընթացը:

Խնդրում եմ նաև Ձեր լիազորության շրջանակներում ստիպել Խարբերդի մասնագիտացված մանկատանը մեզ պատճառված 200 հազար ՀՀ դրամը փոխհատուցելու համար»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Տիսա» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ Մայրանուշ Կարապետյանը:

4. **<u>ՍՑ-ԷՍ-2017/82 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 26.12.2017թ. թիվ 03/26-3/24422-17 գրությունը, ՀՀ ԱՍՀՆ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը 26.12.2017թ. թիվ Ե-848 գրությունը, ՀՀ ԱՍՀՆ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Տիսա» ՓԲԸ-ի միջև 15.02.2017թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-6-ԽՄ-2 ծածկագրով գնման պայմանագիրը, Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 12.12.2017թ. և 19.12.2017թ. կազմված արձանագրությունները, «Տիսա» ՓԲԸ-ի կողմից 16.01.2018թ. Խորհրդին ուղղված գրությունը.

ՀՀ ԱՍՀՆ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Տիսա» ՓԲԸ-ի միջև 15.02.2017թ. կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-6-ԽՄ-2» ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակակարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթերք (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար (հավելված N3):
- 2.3 կետի համաձայն՝ Վաճառողը մատակարարում է ապրանքը Գնորդի կողմից ներկայացված գնման հայտի հիման վրա:
- 3.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակակարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի.
- 3.1.2 կետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 7.2 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

- 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:
- 3.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

Պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է՝ 2017թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում մատակարարել 1205կգ «խոզի միս ոսկրոտ» ապրանքը:

Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրով նախատեսվել է, որ նշված ապրանքը պետք է մատակարարվի պաղեցրած վիճակում, պահված 0-ից մինչև 12°C ջերմաստիճանի պայմաններում, բժշկական փաստաթղթերով, ոսկորի և մսի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 40-60%, մսեղիք, ճարպի շերտի հաստությունը ոչ ավել քան 3 սմ, ԳOUS 7724-77: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80%:

Պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 2,276,239,94 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 12.12.2017թ. կազմված արձանագրության համաձայն՝ 12.12.2017թ. «Տիսա» ՓԲԸ-ի կողմից սննդամթերքի մատակարարումն իրականացվել է, սակայն 31-րդ չափաբաժինը (միս խոզի ոսկրոտ) չի համապատասխանել տեխնիկական բնութագրին, այն է՝ եղել է ոչ ամբողջական, տարբեր կտորներից: Պատասխանատու ստորաբաժանումը որոշում է ընդունել տալ սեղմ ժամկետ՝ միսը փոխարինելու և բնութագրին համապատասխան ապրանք մատակարարելու համար:

Ի պատասխան «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված վերը նշված դիրքորոշման՝ «Տիսա» ՓԲԸ-ն վերջինիս ուղղված 12.12.2017թ. գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից ապրանքի չընդունելն անհիմն է, քանի որ Պայմանագրով սահմանված խոզի մսի բնութագրում չկա որևէ նշում այն մասին, որ այն պետք է լինի ամբողջական: Միևնույն ժամանակ, Ընկերությունը նշել է, որ հնարավորություն չունի պահելու չընդունված միսը և Պատվիարատուի մեղքով կրում է վնասներ:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված մեկ այլ՝ 19.12.2017թ. արձանագրության համաձայն՝ «Տիսա» ՓԲԸ-ի կողմից 31-րդ չափաբաժինը (միս խոզի ոսկրոտ) չի մատակարարվել, ինչի արդյունքում Պատվիրատուն որոշում է ընդունել միակողմանի լուծել կողմերի միջև կնքված պայմանագիրը:

Ընկերությունը Պատվիրատուին ուղղված 15.12.2017թ. և 26.12.2017թ. գրություններով դարձյալ հայտնել է դիրքորոշում այն մասին, որ 12.12.2017թ. Պատվիրատուի հայտի հիման վրա մատակարարված 200 կգ միսը համապատասխանել է պայմանագրի տեխնիկական բնութագրին, սակայն ամբողջական կտոր չլինելու պատճառով Պատվիրատուի կողմից չի ընդունվել: Ընկերությունը հայտնել է նաև, որ նշված ապրանքը չի մատակարարելու, քանի որ Պատվիրատուն պահանջում է 2 ամբողջական կտոր, մինչդեռ խոզի ոսկրոտ միսը ամբողջական լինելու պայման Պամանագրով նախատեսված չէ:

ՀՀ ԱՍՀՆ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը 25.12.2017թ. թիվ Ե-846 գրությամբ դիմել է «Տիսա» ՓԲԸ-ին և հայտնել, որ ՀՀ ԱՍՀՆ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Տիսա» ՓԲԸ-ի միջև 15.02.2017թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-6-ԽՄ-2 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում,

պատասխանատու ստորաբաժանման արձանագրությունների, ինչպես նաև սննդամթերքի մատակարարման հետ կապված պայմանագրի (1.1, 3.1.1, 3.4.1, 3.1.2 կետերի) էական խախտումների հետևանքով «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը ցանկություն ունի միակողմանի հրաժարվելու և լուծելու կողմերի միջև կնքված պայմանագիրը 31-րդ (միս խոզի) չափաբաժնի մասով: «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից որոշում է ընդունվել 2017թ. դեկտեմբերի 25-ից միակողմանի լուծել «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Տիսա» ՓԲԸ-ի միջև 15.02.2017թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-6-ԽՄ-2 ծածկագրով գնման պայմանագիրը:

Ի լրումն 26.12.2017թ. Պատվիրատուին ուղղված գրության, «Տիսա» ՓԲԸ-ն 26.12.2017թ. տեղեկացրել է վերջինիս, որ միակողմանի լուծում է ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-6-ԽՄ-2 ծածկագրով գնման պայմանագիրը:

Պաշտոնական ընթացակարգի քննության շրջանակներում «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել խնդրո առարկա հանդիսացող Պայմանագրի վերաբերյալ իր դիրքորոշումը, որով, մասնավորապես, հայտնել է հետևյալը.

«ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Տիսա» ՓԲԸ-ի միջև կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-6-ԽՄ-2 գնման պայմանագրի շրջանակներում 08.12.2017թ. «Տիսա» ՓԲԸ-ին ներկայացվել է մատակարարման հայտ, որի համաձայն նշյալ կազմակերպության կողմից մատակարարվել է 200 կգ խոզի միս՝ ոչ համապատասխան տեխնիկական բնութագրին՝ մի քանի խախտումներով.

1. Համաձայն տեխնիկական բնութագրի, մատակարարված խոզի մսի ոսկրի և մսի հարաբերակցությունը պետք է լիներ համապատասխանաբար 40-60%, սակայն եթե խոզի ամբողջական մսից հանվում է 2 ազդրամսերը /բուդը/՝ հետևաբար ոսկորի և մսի հարաբերակցությունը արդեն իսկ խախտվում է, այն դառնալով ոչ պակաս քան 60-40%:

2. 12.12.2017թ-ին «Տիսա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված անասնաբուժական վկայականում նշված է եղել 200 կգ խոզի միս՝ 2 գլուխ անասունի, սակայն մատակարարված միսը բաղկացած է եղել տարբեր հաստության ոսկորներից՝ 8 կտորներից: Ի դեպ, իսկությունը ճշտելու համար առաջարկում եմ հիմք ընդունել

Բողոքարկման խորհրդին տրամադրած դիրքորոշմանը կցված «Տիսա» ՓԲԸ-ի 15.12.2017թ. գրությունը, որում նշված է, որ պատվիրատուն պահանջում է 2 ամբողջական կտոր: Պատվիրատուի պահանջը 2 կտորի վերաբերյալ կապված է եղել տրամադրված անասնաբուժական վկայականում նշված 2 գլուխ անասունի հետ: Սակայն, Գնումների բողոքարկման խորհրդին տրամադրված փաստաթղթերում կցված է մեկ այլ անասնաբուժական փաստաթուղթ, որում, նշված է 8 գլուխ անասուն: Պատասխանատու ստորաբաժանման կողմից մատակարարին բազմիցս զգուշացվել է, որ եթե մատակարարվում է 8 տարբեր կտորներ, հետևաբար պետք է լինի բժշկական փաստաթուղթ՝ որում նշվում է 8 գլուխ անասունի վերաբերյալ տեղեկատվություն:

Պատասխանատու ստորաբաժանումը կազմել է արձանագրություն, «Տիսա» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Պարույր Մնացականյանի ներկայությամբ, և տրվել է 1 օր ժամանակ ապրանքի փոխարինման և բնութագրին համապատասխան ապրանք մատակարարելու համար, որը սակայն «Տիսա» ՓԲԸ-ի դիրքորոշման մեջ ներկայացվում է որպես ապօրինի պահանջ: 13.12.2017թ. ապրանքի փոխարինման համար սահմանված ժամկետի ավարտից հետո կրկին պատասխանատու ստորաբաժանումը կազմել է արձանագրություն և նորից «Տիսա» ՓԲԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկել մատակարարման հայտ՝ տալով վերջնաժամկետ՝ 19.12.2017թ: Սակայն կազմակերպությունը՝ փաստաթղթային և ապրանքային իսկությունը ապահովելու փոխարեն, հաշվի չառնելով, որ մանկատանը խնամվում են բազմաթիվ արատներով երեխաներ և մսամթերքի հետ կապված փոքր-ինչ անզգույշ քայլ կարող է լուրջ հետևանքներ ունենալ, գրությամբ պատասխանում է, որ Պատնիրատուն լուրջ վնասներ է հասցրել «Տիսա» ՓԲԸ-ին՝ տալով շուրջ 200.000 դրամի վնաս:

Բացի այդ, մանկատունը ընավ չի շեշտել ամբողջական լինելու հանգամանքը, այլ շեշտել է բնութագրին ոչ համապատասխան լինելը՝ այն է 40-60 տոկոս ոսկրի և մսի հարաբերակցության չապահովելը, բժշկական փաստաթղթերով նշված գլուխների և մատակարարված կտորների անհամապատասխանությունը»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստի Պատվիրատուն պնդեց իր դիրքորոշումն ամբողջությամբ:

«Տիսա» ՓԲԸ-ն Խորհրդին ներկայացրեց Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին իր կողմից մատակարարված ապրանքի և դրա տեղափոխման պայմանների համապատասխանությունը հավաստող անասնաբուժական վկայականի և անասնաբուժասանիտարական փորձաքննության եզրակացության պատճենները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Խորհուրդն արձանագրում է, որ «Տիսա» ՓԲԸ-ի կողմից Պայմանագրով սահմանված կարգով մատակարարվել է «միս խոզի ոսկրոտ» ապրանքատեսակը, սակայն «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից Ընկերության կողմից մատակարարված խոզի միսը չի ընդունվել՝ այն պատճառաբանությամբ, որ այն եղել է ոչ ամբողջական, այսինքն, բաղկացած է եղել տարբեր կտորներից և նշված հանգամանքը Պատվիրատուի կողմից որակվել է որպես Պայմանագրի էական խախտում:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Տիսա» ՓԲԸ-ի միջև 15.02.2017թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-6-ԽՄ-2 ծածկագրով գնման պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրով «խոզի միս ոսկրոտ» ապրանքատեսակը՝ ամբողջական

կտորով մատակարարելու պահանջ նախատեսված չէ, ինչպես նաև Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու որոշումը պայմանավորված է եղել Պատվիարատուի սահմանված ժամկետում Ընկերության կողմից խոզի մսի 2 ամբողջական կտոր մատակարարելուց հրաժարվելու հանգամանքով:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքը չընդունելով և վերը նշված հիմքով Պայմանագիրը միակողմանի լուծելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Պայմանագրի 1.1 կետով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի՝

- 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է 6 ամսից մինչև 3 տարի ժամկետով(...):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Տիսա» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.12.2017թ. «Տիսա» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ 90032661) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**